ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
09 սեպտեմբերի 2025 թվական, N 135-Ա

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 75/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0037-0027 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.009767 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21) ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածներով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 46-րդ կետով, հաշվի առնելով, որ քննարկվող հողամասի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, այն դարձնել առանձին հրապարակային սակարկությունների առարկա, հիմք ընդունելով Արմեն Արշակի Խալաթյանի դիմումը, սեփականության իրավունքի N 30052025-06-0061 և 07082025-06-0007 վկայականները, համայնքային սեփականության N 18082025-06-0011 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արմեն Արշակի Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց 75 հասցեում գտնվող, կադաստրային 06-002-0037-0031 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.031 հա մակերեսով հողամասն ընդլայնելու նպատակով օտարել՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց 75/10 հասցեում գտնվող, կադաստրային 06-002-0037-0027 ծածկագրով, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.009767 հա մակերեսով համայնքային սեփականության հողամասը՝ 570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ արժեքով:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Արմեն Արշակի Խալաթյանի հետ կնքելու հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
3.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
4.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
5.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
6.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
7.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
8.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
9.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
10.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
11.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
12.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
13.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
14.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., սեպտեմբերի 09,
Լոռու մարզ, ք. Ալավերդի